ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1/3.3-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային
հանձնաժողովի հայտերի բացման նիստի

2024թ. հուլիսի 22-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի **3.3 կետով նախատեսված «Աջակցություն Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) (հայտերի բացման) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ

Ա.Մկրտչյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ

Ս.Ասլիզադյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ

Ս.Հովհաննիսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ

Ա.Սողբաթյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար

Հ.Սահակյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական

Լ.Պետրոսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական

Շ.Հովսեփյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Ներկայացված հայտերի բացում armeps.am համակարգի միջոցով:
2. Հայտերի գնահատման ժամկետի սահմանում:
3. Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի հաստատում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի **3.3 կետով նախատեսված «Աջակցություն Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին»** միջոցառման շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

2. Ծրագրի հավելված 2-ի **3.3 կետով նախատեսված «Աջակցություն Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին»** միջոցառման իրականացման համար մրցույթին ներկայացվել է 3 (երեք) հայտ՝

- «ԳՐԻԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի,
- «Արեգակ Արդար» ՍՊԸ-ի,
- «Ազնավուր» Հիմնադրամի կողմից:

Լսեցին՝

Հայտի գնահատման ժամկետի սահմանման մասին:

Որոշեցին՝

Հաշվի առնելով միջոցառման իրականացման հրատապությունը հայտի գնահատման ժամկետ սահմանել մինչև 2024թ. հուլիսի 26–ը, ժամը 17^{00}ն:

Լսեցին՝

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա և ժամի հաստատման մասին:

Որոշեցին՝

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստն անցկացնել 2024 թ. հուլիսի 30-ին, ժամը 15^{00}-ին:

Ս.Հակոբյան (հանձնաժողովի նախագահ)	-	
Ա.Մկրտչյան	-	
Ս.Ասլիզադյան	-	
Ս.Հովհաննիսյան	-	
Ա.Սողբաթյան	-	
Հ.Սահակյան	-	
Լ.Պետրոսյան	-	
Շ.Հովսեփյան	-	